

վանքը մեզի համար, նոյնն էր Այլտտի դպրոցը 18^{րդ} դարու կիսուն մէջ:

Եւ Այլտտ ու իր դպրոցը սաստիկ հալածուեցան շհասկցող՝ եւ գիտակցաբար հակակիր անհասաներէ եւ համայնքներէ: Այլտտի դպրոցը իր խօսելու եւ գրելու ձեւին մէջ թարմութիւն մ'ունէր, ժամանակի գիտութիւնները կարելի եղած խնամքով կը դասախօսուէր այն դպրոցին մէջ, իտալերէնն ու լատիներէնը որ կրօնական բոլոր ուսումնասիրութեան հետեւելու համար ամէնէն յարմար լեզուներն էին այն ատեն, մտած էին Այլտտի դպրոցին մէջ Աթոլիկ հեղինակներու վիթխարի գործերով: Այլտտ մարդ կ'ուզէր հասցնել Եկեղեցւոյ համար, ինքը ճարտարախօս բեմական մը, օժտեց Պոլսոյ Եկեղեցիները բեմական նոր ոյժերով. ինքը՝ հետաքրքիր բան սորվելու՝ գրքեր թարգմանել ու հրատարակել տուաւ, մանաւանդ ընդօրինակութիւններով գրքեր բազմացուց, որպէս զի ժողովուրդը կարդայ եւ լուսաւորուի: Այս մեծ աշխատութեան մէջ՝ քաջալերութենէ աւելի բամբասանքի ու հալածանքի արժանացաւ: Օտար հեղինակներ ուսումնասիրել, գիտութեանց հետեւիլ, քրէական յանցանք մըն էր իր հակակիրներուն համար. բայց վհատիլ չէր գիտեր նկարագրի մարդը, մէկ կողմէն իր մշտախօս բեմէն կը քարոզէր իր ուղղութեան պէտքը, միւս կողմէն իր գրքերու յիշատակարաններուն մէջ կը բացատրէր իր դպրոցի ոգին եւ անընդհատ՝ ոյժ, ժամանակ, մարդ, դրամ կը գործածէր, որպէս զի Պոլսոյ Պատրիարքութիւնը իր բազմակողմանի պարտականութիւնները կարելի եղածին չափ ճշդութեամբ կատարէ:

Այլտտի դպրոցէն բաւական բան մնացած է մեզի: Ահագին մատենադարանի մը մնացորդը, որ դարձեալ պատկառելի է ըստ ինքեան: Ո՛րչափ ալ հինցած եւ օգտակարութեան արժէքը կորսնցու-